

Համարը N 52-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը ՀՀ ՊՏ 2015.11.16/27(539)
Հոդ.317

Ընդունող մարմինը Առողջապահության նախարար
Ստորագրող մարմինը Առողջապահության նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 26.11.2015

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 23.10.2015
Ստորագրման ամսաթիվը 23.10.2015
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

Կապել ալլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԱՌՈՂՋԱԿԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐԻ ԻՄՈՒՆԱՑՄԱՆ
ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»
ՀՀ առողջապահության
նախարարության կողմից
3 նոյեմբերի 2015 թ.
Պետական գրանցման թիվ 10015442

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱԿԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

23 հոկտեմբերի 2015 թ.

N 52-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐԻ ԻՄՈՒՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 15-րդ հոդվածը՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել արյան դոնորի իմունացման կարգը՝ համաձայն հավելվածի:

Ա. Մուրադյան

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2015 թվականի հոկտեմբերի 23-ի
N 52-Ն հրամանի

Կ Ա Ր Գ

ԱՐՅԱՆ ԴՈՆՈՐԻ ԻՄՈՒՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորում են արյան դոնորի իմունացման հետ կապված հարաբերությունները:

2. Դոնորի իմունացումը կատարվում է բուժական հատկություններով օժտված հակառեզուս իմունոգլոբուլինի արտադրության համար անհրաժեշտ ռեզուս հակամարմիններով հարուստ ալազմայի ստացման նպատակով:

3. Ռեզուս հակածնով իմունացումը և կրկնակի իմունացումը (այսուհետ՝ ռեիմունացում) կատարվում է ռեզուս բացասական ccdee կամ Ccdee ֆենոտիպերով արյան պատկանելիություն ունեցող դոնորին:

4. Ռեզուս հակածնով իմունացումը կամ ռեիմունացումը կատարվում է իմունացման ենթարկվող դոնորի գրավոր համաձայնությամբ՝ համաձայն Ձև 1-ի:

5. Յուրաքանչյուր անգամ այն արյունը, որով կատարվում է իմունացումը կամ ռեիմունացումը, հետազոտվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի օգոստոսի 7-ի թիվ 12-Ն հրամանի համաձայն:

6. Իմունացումից կամ ռեիմունացումից առաջ իմունացման կամ ռեիմունացման ենթարկվող դոնորը անցնում է բժշկական հետազոտում՝

- 1) արյան ընդհանուր քննություն,
- 2) կենսաքիմիական քննություն (ULS (ալանինամինոտրանսֆերազա ֆերմենտ), ALP (ասպարտատամինոտրանսֆերազա ֆերմենտ), կրեատինին, միզանյութ),
- 3) որովայնի օրգանների գերձայնային հետազոտություն,
- 4) էլեկտրասրտագրություն,
- 5) հեպատիտ Բ-ի հակածնի (HBsAg), հակա-HBc հակամարմինների, հեպատիտ Ց-ի հակամարմինների, ինչպես նաև սիֆիլիսի և բրուցելլոզի հակամարմինների որոշում:

7. Մինչ իմունացումը իմունացման ենթարկվող դոնորի արյունը հետազոտվում է Կումբսի ուղղակի ռեակցիայով:

8. Կումբսի ուղղակի ռեակցիայի դրական արդյունքը հանդիսանում է իմունացման և ռեիմունացման հակացուցում:

9. Կումբսի ուղղակի ռեակցիայի բացասական արդյունքի դեպքում դոնորի արյան շիժուկում որոշվում են ռեզուս հակամարմինները Կումբսի անուղղակի ռեակցիայով:

10. Ռեզուս հակամարմինների առկայության դեպքում որոշվում է դրանց սպեցիֆիկությունը (յուրահատկությունը) և տիտրը (հակամարմինների քանակը):

11. Եթե սույն կարգի 10-րդ կետի ցուցանիշները բավարար չեն հակառեզուս իմունոգլոբուլինի արտադրության համար, ապա հակամարմինների ակտիվության բարձրացման նպատակով այդ անձանց կատարում են ռեիմունացում:

12. Իմունացման համար հակածին է հանդիսանում ռեզուս դրական **ccDee** կամ **CcDee** ֆենոտիպերով O (I) կամ իմունացվող դոնորի հետ միևնույն արյան խմբային պատկանելիություն ունեցող արյունը:

13. Իմունացման և ռեիմունացման համար նախատեսված արյունը չպետք է պարունակի Kell հակածին:

14. Իմունացումը կատարվում է մի քանի փուլով՝

1) առաջին փուլում կատարում են երեք միջմկանային կամ ներերակային ներարկումներ 3-4 օր ընդմիջումներով.

ա. առաջին ներարկում՝ 10 մլ դոնորական արյուն-հակածին,

բ. երկրորդ ներարկում 5 մլ դոնորական արյուն-հակածին,

գ. երրորդ ներարկում 5 մլ դոնորական արյուն-հակածին,

2) երկրորդ փուլը կատարվում է իմունացման առաջին փուլից երեք-չորս ամիս հետո.

ա. կատարում են երեք միջմկանային կամ ներերակային ներարկումներ 3 օր ընդմիջումներով,

բ. յուրաքանչյուր ներարկում՝ 5 մլ դոնորական արյուն-հակածին,

15. Յուրաքանչյուր փուլի ավարտից հետո (8-30-րդ օրը) որոշում են հակա-ռեզուս հակամարմինների քանակը (տիտրը) Կումբսի անուղղակի ռեակցիայով:

16. Եթե երկու փուլերից հետո հակա-ռեզուս հակամարմիններ չեն առաջացել, ապա երկրորդ փուլի ավարտից 4-6 ամիս անց կատարվում է իմունացման երրորդ և չորրորդ փուլերը՝ սույն կարգի 15-րդ կետի համաձայն:

17. Եթե չորրորդ փուլի ավարտից հետո հակա-ռեզուս հակամարմիններ չեն առաջացել, ապա 4 ամիս անց կատարվում են հինգերորդ և վեցերորդ փուլերը, որոնց ժամանակ անհրաժեշտության դեպքում միջմկանային ներարկումների թիվը կարելի է ավելացնել 1-3 ներարկումներով:

18. Եթե այդ փուլերից հետո հակամարմիններ չեն առաջանում, ապա այդ դոնորի իմունացումը դադարեցվում է:

19. Ռեիմունացումը, որը կատարվում է հակա-ռեզուս հակամարմինների քանակի պահպանման կամ բարձրացման նպատակով, իրականացվում է այն դոնորներին, որոնց մոտ հակա-ռեզուս հակամարմինների քանակը իջել է 1:32-ից:

20. Ռեիմունացումը կատարվում 2-9 ամիսների ընթացքում:

21. Ռեհմունացումը կատարվում է երկու կամ երեք միջմկանային կամ ներերակային 5 մլ դոնորական արյան ներարկումներով 2-3 օր ընդմիջումով:

22. Իմունացումից հետո լրացվում է հակա-ռեզուս հակածնով իմունացման վերաբերյալ տեղեկանքը՝ համաձայն Ձև 2-ի:

Ձև 1

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Դոնորի իմունացման վերաբերյալ

Ես՝ _____

դոնորի անուն, ազգանուն

տեղեկացված լինելով, որ իմունացման հետևանքով ինձ մոտ կարող է զարգանալ հետփոխներարկումային բարդություն, եթե ինձ փոխներարկվի ռեզուս դրական էրիթրոցիտ պարունակող արյան բաղադրամաս, տալիս եմ իմ համաձայնությունը ինձ դոնորական արյուն-հակածնով իմունացման վերաբերյալ:

Դոնոր _____

ստորագրություն

Ամսաթիվ « ____ » _____ 20 թ.

Ձև 2

ՏԵՂԵԿԱՆՔ

հակա-ռեզուս հակածնով իմունացման վերաբերյալ

Կազմակերպության անվանումը _____

Դոնորի անուն, ազգանուն, հայրանուն _____

Արյան խումբը ըստ ABO համակարգի _____

Ռեզուս պատկանելիության ֆենոտիպը _____

Իմունացվել է _____ հակածնով (ռեզուս-հակածին)

Արյան բաղադրամասերի փոխներարկման դեպքում պարտադիր փոխներարկել
_____ խմբի և _____ ռեզուս պատկանելիության արյան բաղադրամաս

Լաբորատորիայի ղեկավար՝ _____

Ստորագրություն

Կազմակերպության գործադիր մարմնի
ղեկավար՝ _____

Ստորագրություն

Կ.Տ. (առկայության դեպքում)

Տրամադրման ամսաթիվ « ____ » _____ 20 թ.

